



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

13 հոկտեմբերի 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը
Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝
Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Էմմա Գասպարյանը,
Արմենուհի Ոսկանյանը, Գրիգոր Կարապետյանը և Շուշանիկ Հակոբյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝
Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը և Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Աշոտ
Անտինյանը, Արշակ Սրապյանը, Պավլիկ Պապինյանը և Սերյոժա Սարգսյանը:
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝
Թիանա Բոջուկյանը:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.05-ին նիստը հայտարարեց
բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել
որպես լրացուցիչ 10-12-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

12. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 10 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:
Քվեարկությամբ, կողմ՝ 10 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 105-Ա/:**

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հոկտեմբերի 13-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2023թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

4. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը փոփոխելու և նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱ3 24 ավտոմեքենան խոտանելուն համաձայնություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

12. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ձեռք է բերվել թվային խցիկ CANON EOS 250D BK18-55III հիմնական միջոցը, որն անհրաժեշտ է ներառել գույքագրման փաստաթղթերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 106-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2023թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է ավագանուն ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023թ-ի բյուջեի 9 ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտները կազմել են 503286600 դրամ, ծրագրված (ճշտված) 594264400 դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 84.7%: Համայնքի սեփական եկամուտները ծրագրվել են 171006700 դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 103700000 դրամ կամ կատարվել է 60.6%:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի հաշվին երրորդ եռամսյակին իրականացվել է 562726600 դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 82.2%-ը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 107-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2023թ-ի երրորդ եռամսյակում համայնքի թվով 17 անապահով ընտանիքի հատկացվել է ընդհանուր 600000 ՀՀ դրամի սոցիալական օգնություն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 108-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը փոփոխելու և նոր խմբագրությամբ հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Լոռու մարզպետի 05.10.2023թ-ի թիվ 01/107.4.1/07276-2023 գրությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, տարածքային կառավարման վարչության պետ Ա. Իվանյանի զեկուցագիրը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Փամբակ համայնքում իրականացված կադրային գործի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված թերությունը վերացնելու նպատակով առաջարկում ենք աշխատակազմի կանոնադրության մեջ կատարել փոփոխություն և այն հաստատել նոր խմբագրությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 109-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ անհրաժեշտ է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող «HOWO » ZZ332783847E մակնիշի 19-21տ. բեռնատարողությամբ ինքնաթափ մեքենան: Գույքը ձեռք էր բերվել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող «Համայնքի կոմունալ տնտեսության զարգացում» ծրագրի շրջանակներում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 110-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱ3 24 ավտոմեքենան խոտանելուն համաձայնություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «Մար Մոս» ՍՊԸ-ի կողմից կատարված գնահատությունը, Արջուտ գյուղի վարչական ղեկավար Վարդան Մկրտչյանի զեկուցագիրը և այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱ3 24 ավտոմեքենան այլևս շահագործման պիտանի չեն, առաջարկվում է տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱ3 24 ավտոմեքենան խոտանելու համար::

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 101, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 111-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է աճուրդով օտարելու նպատակով նախագծով ներկայացված 6 լոտին ավելացնել ևս 7-ը: Առաջարկվում է տալ համաձայնություն 13 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 112-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Հակոբյանի առաջարկությունը, նախատեսվում է հաստիքացուցակում կատարել փոփոխություն, նախկին 44 դրույքի փոխարեն նախատեսվում է 43 հաստիքային միավոր:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 113-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքահրաման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է բյուջեի եկամուտները ավելացնել 1000000 դրամով՝ որպես նվիրատվություն: Տնտեսական հարաբերություններում՝ որպես հողի օտարում ավելացնել 5000000 դրամ:

Կառավարման ապարատում 4212 հողվածով ավելացնել 2500000 դրամ /էլ. էներգիային և գազի ծախս/:

Աղբահանության նախահաշվից 5000000 դրամ տեղափոխել ընդհանուր ծախսերի համար: Դեբետի ջրագիծ 7200000

Քարաբերդ գյուղի գիշերային լուսավորության կառուցման համար «Փողոցային լուսավորություն» նախահաշվում 5112 հողվածում ավելացնել 960000 դրամ

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 114-Ն/:

10. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.10.2023թ. թիվ 90 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 01/111.6/07485-2023 գրությունը, առաջարկվում է Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 06-102-0024-0048 ծածկագրերով 0,067062 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասը՝ «Վահագնի» ՓՀԷԿ-ի կայանային հանգույցի շինությունների

նպատակային նշանակությանը համապատասխան պետական գրանցման նպատակով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 115-Ա/:

11. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարը առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի նոյեմբերի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 116-Ա/:

Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի նոյեմբերի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԵՆՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 105-Ա
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2023Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հոկտեմբերի 13-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը:
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի հոկտեմբերի 13-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի բյուջեի կատարման 2023թ-ի III եռամսյակի կատարած ֆինանսական հաշվետվության մասին:

4. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի III եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը փոփոխելու և նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտային կազմակերպությանը ամրացնելու մասին:

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱ3 24 ավտոմեքենան խոտանելուն համաձայնություն տալու մասին:

8. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

10. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

12. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ -10

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍԴԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, Փամբակ համայնքի
ավագանին՝ **որոշում է**.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության
գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն
հավելվածի:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2023 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գինը /դրամ/	Գումարը /դրամ/
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)		
1	Թվային խցիկ CANON EOS 250D BK18-55III	2023	1	1	240200	240200
	Ընդամենը		1	1	240200	240200

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՅՈՒՄԻ ԱՆՎՈՍԱՆԴՅԱՆ
 ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԄԱՐՁԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 107-Ա

ՀՀ ԼՈՌԻ ԄԱՐՁԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2023Թ-Ի III
ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական հնքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային
համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 1-ին կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է**.

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023թ-ի բյուջեի 9
ամսվա կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՐԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակը կատարվել է. Ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 503286.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 594264.4 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 84.7%: Ընդ որում՝ Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 502266.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 421059.3 հազար դրամ՝ ապահովելով 83.3% կատարողական, ֆոնդային մասով ծրագրված (ճշտված) 225015.7 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 170148.2 ապահովելով 75.6% կատարողական:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 171006.7 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 103700.0 հազար դրամ կամ 60.6%:

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 562726.6 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 82.2%-ը:

Ստորև ներկայացվում է Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Հարկեր և տուրքեր.

- Գույքահարկի ապառք համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների մասով երրորդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 201.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 300.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 67.1%:

- Հողի հարկի ապառքի մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 2113.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 2064.1 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 102.4%:

- Անշարժ գույքի հարկի մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 8955.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 26206.8 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 34.2%:

- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 34777.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 81704.9 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 42.6%:

Տեղական տուրքերի մասով երրորդ եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 4232.4 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 4018.9 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 105.3%:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների մասով երրորդ եռամսյակի մուտքը կազմել է 301259.3 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 301259.3 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%:

Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) մասով երրորդ եռամսյակի մուտքերը կազմել են 74061.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 83785.6 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 88.3%:

Այլ եկամուտներ.

Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեով երրորդ եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված 94924.8 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքագրվել է 77686.5 հազար դրամ, որից.

- Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 7388.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 11412.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 64.7%:

- Այլ գույքի վարձակալությունից մուտքերի մասով փաստացի մուտքերը կազմել են 830,0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1000.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 83%:

- Տեղական վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 9467.8 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 8900.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել 106.4%:

- Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 4121.1 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 4000.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 103%:

- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվություններ) մասով ծրագրված (ճշտված) 30000.0 հազ. դրամի նկատմամբ, փաստացի մուտքը կազմել է 16000.0 հազար դրամ կամ կատարվել է 53.3%:

- Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ տրանսֆերտների (նվիրատվություններ արտաքին աղբյուրներից) մասով փաստացի մուտքերը կազմել են 8166.1 հազ. դրամ ծրագրված (ճշտված) 8212.8 հազ. դրամի նկատմամբ, կամ կատարվել է 99.4%:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից ծրագրված (ճշտված) 133017.3 հազ. դրամի նկատմամբ փաստացի մուտքը կազմել է 87920.9 հազար դրամ կամ կատարվել է 66.0%:

- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտների մասով փաստացի մուտքերը կազմել են 31612.9 հազար դրամ, (ծրագրված (ճշտված) 31400.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100.7%:

Ծախսեր՝ Փամբակ համայնքի 2023 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 562726.6 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 684486.70 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 82.2%-ը:

Փամբակ համայնքի 2023 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	125300,0	116620.5	93,0
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	56149,1	36926.3	65,8
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	160779,9	139998.2	87,0
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՆԵՐ	23280,8	22225.8	95,5
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	400.0	250.0	62,5
ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐՔԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ	3023,0	2628.9	87,0
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	400.0	0	0
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	325935,9	253686.1	77,8
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	4300.0	3168.2	73,7
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	1992,0	600.0	30,1
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՅՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-20000.0	-13377.4	66,9
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԿԱՄ ԿԱՊԻՏԱԼ ԱԿՏԻՎԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	2926,0	0	0

Փամբակ համայնքի 2023 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	247827.2	193926.8	78.2
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	198558.0	174959.9	88.1
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	65407.0	56524.7	86.4
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	51457.4	40682.0	79.0
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	250.0	0	0
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	41762.7	37144.1	88.9
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	77024.4	57959.1	75,2
ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2200.0	1530.0	69.5
ԸՆԴԱՄԵՆԸ	684486.7	562726.6	82.2

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ԿՈՍԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 108-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ 2023Թ-Ի III
ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 06 ապրիլի 2022 թվականի «Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 43-Ա և «ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգ սահմանելու մասին» թիվ 32-Ա որոշումները՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

Ընդունելի գիտություն Փամբակ համայնքի բյուջեից 2023թ-ի III եռամսյակում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված սոցիալական աջակցության /դրամական օգնության/ վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

2023թ-ի երրորդ եռամսյակի ընթացքում համայնքի բյուջեից անապահով
ընտանիքներին հատկացված դրամական օգնության վերաբերյալ

ՀՀ	Ամիս/ամս աթիվ	Որոշման համար	Վարչական կենտրոնը	ԱԱՀ, անձը հաստատող փաստաթուղթ	Սոցիալական օգնության չափը /ՀՀ դրամ/
1	10.07.2023	645-Ա	Փամբակ	Անահիտ Ֆրունզիկի Ղարիբյան /ծնված՝ 15.01.1964թ., նույնականացման քարտ՝ 001059567, տրված՝ 03.05.2014թ., 033-ի կողմից/	20 000
2	18.07.2023	689-Ա	Մարգահով իտ	Վեներա Միշայի Ջուլայան /ծնված՝ 05.01.1963թ., անձնագիր՝ AS0362306, տրված՝ 18.09.2018թ., 033-ի կողմից/	10 000
3	18.07.2023	689-Ա	Դեբետ	Թորգոմ Արշալույսի Գրիգորյան /ծնված՝ 19.11.1984թ., անձնագիր՝ AV 0286472, տրված՝ 28.06.2022թ., 018-ի կողմից/	50 000
4	01.08.2023	731-Ա	Անտառամո ւտ	Գայանե Վերիսի Ոսկանյան /ծնված՝ 28.07.1973թ., անձնագիր՝ AV 0379407, տրված՝ 15.08.2022թ., 033-ի կողմից/	20 000
5	01.08.2023	731-Ա	Անտառամո ւտ	Մարտին Ազատի Հարությունյան /ծնված՝ 01.03.1964թ., նույնականաման քարտ՝ 004921540, տրված՝ 30.07.2014թ., 033-ի կողմից/	20 000
6	17.08.2023	803-Ա	Լեռնապա տ	Գոհար Ռուլանտի Մուկույան /ծնված՝ 11.07.1969թ., անձնագիր՝ AR 0205023, տրված՝ 14.03.2017թ., 033-ի կողմից/	40 000
7	17.08.2023	803-Ա	Անտառամո ւտ	Սամադ Գրիշոյի Գևորգյան՝ /ծնված՝ 04.01.1964թ., նույնականացման քարտ՝ 008471443, տրված՝ 25.07.2016թ., 066-ի կողմից/	50 000
8	17.08.2023	803-Ա	Մարգահով իտ	Հասմիկ Հմայակի Խառատյան /ծնված՝ 04.11.1967թ., անձնագիր՝ AS 0368221, տրված՝ 14.09.2018թ., 033-ի կողմից/	30 000
9	17.08.2026	803-Ա	Մարգահով իտ	Սիլվա Սեյրանի Պոստոլակյան /ծնված՝ 20.12.1976թ., անձնագիր՝ AR 0492841, տրված՝	30 000

				25.10.2017թ., 033-ի կողմից/	
10	17.08.2027	803-Ա	Բազում	Սրբուհի Լադիմիրի Հարությունյան /ծնված՝ 09.09.1951թ., անձնագիր՝ AU 0491696, տրված՝ 09.11.2021թ., 033-ի կողմից/	40 000
11	17.08.2028	803-Ա	Վահագնի	Կարլեն Մկրտչի Քոչարյան /ծնված՝ 02.11.1957թ., անձնագիր՝ AT 0432795, տրված՝ 19.05.2020թ., 033-ի կողմից/	50 000
12	21.08.2023	813-Ա	Անտառամուս	Ռիմա Իսմեիլի Պապոյան /ծնված՝ 24.05.1951թ., նույն. Քարտ՝ 009216300, տրված՝ 17.01.2018թ., 033-ի կողմից/	50 000
13	29.08.2023	841-Ա	Դեբետ	Աշոտ Մուսայի Պապինյան /ծնված՝ 14.05.1959թ., նույնականացման քարտ՝ 010111227, տրված՝ 12.12.2017թ., 033-ի կողմից/	30 000
14	29.08.2023	841-Ա	Արջուտ	Գարիկ Սերյոժայի Բասենցյան /ծնված՝ 31.05.1980թ., անձնագիր՝ AV 0673598, տրված՝ 15.03.2023թ., 033-ի կողմից/	30 000
15	08.09.2023	888-Ա	Եղեգնուտ	Ալլա Մարտիրոսի Հարությունյան /ծնված՝ 30.12.1995թ., անձնագիր՝ AV0385414, տրված՝ 18.08.2022թ., 066-ի կողմից/	30 000
16	20.09.2023	940-Ա	Եղեգնուտ	Միշա Գրիգորի Հովհաննիսյան /ծնված՝ 02.06.1942թ., անձնագիր՝ AL0419852, տրված՝ 08;09.2023թ., 033-ի կողմից/ Դավիթ Հարությունյանի բուժման համար	50 000
17		940-Ա	Բազում	Անախանում Աշոտի Հովհաննիսյան /ծնված՝ 04.01.1943թ., անձնագիր՝ AT 0238090, տրված՝ 30.07.2019թ., 033-ի կողմից/	50 000
				Ընդհամենը՝	600 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 109-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2021թ-ի ԹԻՎ 09-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Լոռու
մարզպետի 05.10.2023թ-ի թիվ 01/107.4.1/07276-2023 գրությունը, ՀՀ
տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության,
տարածքային կառավարման վարչության պետ Ա. Իվանյանի զեկուցագիրը, Փամբակ
համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու «ՀՀ Լոռու մարզի Փամբակի
համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ
09-Լ որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ և այն
շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -10

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄԿԵԼ
ԳԱՄՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ «13»-Ի
N° 109-Լ ՈՐՈՇՄԱՄԲ
ԲԱՂԿԱՑԱԾ Է 11 ԹԵՐԹԻՑ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
«ՓԱՄՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

Փամբակ համայնք

2023թ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի (այսուհետ՝ համայնք) «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ»-ը (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու Փամբակ համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը:
2. Աշխատակազմը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվածորի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 26.180.791119, վկայական N 01Բ941119), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառամուտի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 26.180.782436, վկայական N _____), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 26.180.777142, վկայական N 01Բ927142), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազումի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 26.180.786263, վկայական N 01Բ936263), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.865719, վկայական N 01Բ1015719), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.779574, վկայական N 01Բ929574), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.877063, վկայական N 01Բ1027063), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հալավար համայնքի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.775017, վկայական N 01Բ925017), «ՀՀ Լոռու մարզի Ձորագետավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ /գյուղապետարան/» կազմակերպության (գրանցման համար՝ 62.0031, գրանցման ծածկագիր 10033414 վկայական N Բ 003359), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագյուղի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.882160, վկայական N _____), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովտի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.793306, վկայական N _____), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնածորի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.964169, վկայական N _____), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնիի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.868029, վկայական N _____), «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.778893, վկայական N _____) և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաբերդի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (գրանցման համար՝ 62.180.954385, վկայական N _____) իրավահաջորդը:
3. Աշխատակազմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով, իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
4. Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն, որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:
5. Աշխատակազմի անվանումն է՝

- 1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ,
- 2) հայերեն կրճատ՝ «Փամբակի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ,
- 3) ռուսերեն լրիվ՝ Республика Армения Лорийский регион «Аппарат муниципалитета Памбака» муниципальное административное учреждение,
- 4) ռուսերեն կրճատ՝ «Аппарат муниципалитета Памбака» МАУ,
- 5) անգլերեն լրիվ՝ Lori Region Respublic of Armenia «Staff of Pambak Municipality» community administration office,
- 6) անգլերեն կրճատ՝ «Staff of Pambak Municipality» CAO:
6. Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ, բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:
7. Աշխատակազմը անձամբ չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ՝ օրենքով և(կամ) ավագանու սահմանված չափով և կարգով:
8. Աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Փամբակ գյուղ, 1 փողոց 23, փոստային դասիչ՝ 2041:
9. Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
10. Աշխատակազմը կազմված է կառուցվածքային ստորաբաժանումներից (այսուհետ՝ ստորաբաժանումներ):
11. Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի (ղեկավարի) մասնակցության ապահովումն է:
12. Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ համայնքային կազմակերպություններ) գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:
13. Աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվություն կրում է համայնքը:
14. Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

II. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում՝ անձամբ և իր տեղակալների միջոցով, որոնք գործում են համայնքի ղեկավարի անունից, համապատասխանաբար համակարգում են Աշխատակազմի ստորաբաժանումների, կազմակերպությունների աշխատանքները և պատասխանատվություն են կրում իրենց

- համակարգման ոլորտում գործող ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետ կազմակերպման և անհրաժեշտ արդյունքների ապահովման համար:
17. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:
18. Համայնքի ղեկավարը՝
- 1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,
 - 2) ավագանու հաստատմանն է ներկայացնում որոշումների նախագծեր՝
 - ա. համայնքի զարգացման հնգամյա ծրագրի վերաբերյալ,
 - բ. աշխատակազմի (այդ թվում ստորաբաժանումների) համայնքային կազմակերպությունների կանոնադրությունները,
 - գ. աշխատակազմի, ինչպես նաև ստորաբաժանումների կառուցվածքների, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ,
 - դ. համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ,
 - ե. համայնքային կազմակերպությունների ղեկավարների նշանակման և ազատման վերաբերյալ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում՝ առանց համաձայնեցնելու ավագանու հետ,
 - զ. տեղական հանրաքվե նշանակելու վերաբերյալ,
 - է. համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ,
 - ը. համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ,
 - թ. համայնքի սեփականություն համարվող օտարման կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ,
 - ժ. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ,
 - ի. համայնքի՝ անվանման և վերանվանման ենթակա փոփոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային կազմակերպությունների վերաբերյալ,
- 3) իր որոշմամբ հաստատում է համայնքային կազմակերպությունների տնօրենների կողմից ներկայացված՝ իրենց կազմակերպությունների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը,
- 4) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ,
- 5) օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից,
- 6) նշանակում և ազատում է աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին,

- 7) պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարի տեղակալին.
 - 8) համայնքի ղեկավարի բացակայության դեպքում որոշում է տեղակալներից մեկի վրա համայնքի ղեկավարի պարտականությունները դնելու հարցը,
 - 9) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը,
 - 10) սահմանում է Աշխատակազմի ստորաբաժանումների լիազորությունները և գործառույթները,
 - 11) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ,
 - 12) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը,
 - 13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:
19. Համայնքի ղեկավարի տեղակալը՝
- 1) համակարգում է Աշխատակազմի ստորաբաժանումների, համայնքային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն հանձնարարված բնագավառներում,
 - 2) Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմի ստորաբաժանումներին, համայնքային կազմակերպություններին համայնքի ղեկավարի կողմից տրվող կոնկրետ հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն, խնդիրների և գործառույթների իրականացման նպատակով Աշխատակազմի ստորաբաժանումներին, համայնքային կազմակերպություններին, համայնքային ծառայողներին տալիս է գրավոր և բանավոր հանձնարարականներ և իրականացնում է դրանց կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն,
 - 3) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ և(կամ) իր նախաձեռնությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ,
 - 4) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի ստորաբաժանումների, ինչպես նաև համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը,
 - 5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ,
 - 6) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները,
 - 7) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին,
 - 8) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին,
 - 9) վարչական մարմնի անունից օրենքով սահմանված կարգով հարուցում և իրականացնում է վարչական վարույթներ, վարչական գործերի քննություն, ընդունում է որոշումներ,
 - 10) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:
20. Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:
21. Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ, մամուլի քարտուղար, որոնց միջև պարտականությունների բաշխումը կատարում է համայնքի ղեկավարը:
22. Համայնքի ղեկավարի խորհրդականը՝
- 1) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագիրը,
 - 2) պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի,

երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ,

3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն,

4) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը,

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ,

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

23. Համայնքի ղեկավարի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում համայնքի ղեկավարին,

2) համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ՝ կազմակերպում է համայնքի ղեկավարի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում համայնքի ղեկավարին,

3) կազմակերպում է համայնքի ղեկավարի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը,

4) համագործակցելով Աշխատակազմի մասնագետների, ստորաբաժանումների ղեկավարների հետ՝ համայնքի ղեկավարի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր,

5) նախապատրաստում և համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ,

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

24. Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝

1) համայնքի ղեկավարի պաշտոնական տեսակետները ներկայացնում է տեղեկատվության միջոցներին,

2) անցկացնում է ասուլիսներ և ճեպագրույցներ,

3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը,

4) կազմակերպում է համայնքի ղեկավարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ,

5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով,

6) կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

25. Ավագանին՝

1) օրենքով սահմանված հարցերով վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ,

2) որոշում է Աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը,

3) հաստատում է Աշխատակազմի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը,

4) սահմանում է համայնքի ղեկավարի, Աշխատակազմի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը,

5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է համայնքի ղեկավարի տեղակալին,

6) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին,

7) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը,

8) սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը,

9) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, սահմանում և (կամ)

հաստատում է դրանց վարձավճարների և օտարման գների չափերը և պայմանները, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գները,

- 10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:
26. Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, մասնավորապես՝
 - 1) ապահովում է ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը և նիստին ներկա ավագանու անդամների կողմից արձանագրության վավերացումը,
 - 2) կազմակերպում և ապահովում է աշխատակազմի աջակցությունն ավագանու անդամների կողմից ավագանու որոշման նախագծերի նախապատրաստմանը,
 - 3) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը,
 - 4) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը,
 - 5) ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրատարակումը,
 - 6) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ,
 - 7) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև ավագանու ընդունած՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին որոշմամբ.
 - 8) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.
 - 9) ապահովում է ավագանու որոշումների առաքումը համապատասխան մարզպետարան՝ յոթնօրյա ժամկետում,
 - 10) օրենքով, իրավական այլ ակտերով կամ աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
 - 11) օրենքով, իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ,
 - 12) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
 - 13) Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
27. Աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետն է:
28. Գլխավոր ֆինանսիստը՝
 - 1) ղեկավարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է համայնքի ղեկավարի անմիջական հանձնարարականներով և իրականացում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները
 - 2) իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական

(բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

III. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

29. Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:
30. Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

IV. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը սահմանում է պետական լիազորված մարմինը:
32. Համայնքային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

V. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

33. Աշխատակազմի բաժիններն ապահովում են համայնքի ղեկավարի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը՝ իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատասխան:
34. Աշխատակազմի բաժինները գիտավորում են բաժնի պետերը, որոնք ենթակա և հաշվետու են համայնքի ղեկավարին, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալներին և աշխատակազմի քարտուղարին:
35. Բաժինների պետերին անմիջականորեն ենթակա և հաշվետու են բաժինների աշխատողները:
36. Աշխատակազմի յուրաքանչյուր բաժին անհրաժեշտության դեպքում օժանդակում է մյուս բաժիններին իրենց կանոնադրական լիազորությունները իրականացնելու գործում:
37. Աշխատակազմի բաժինները կարող են ունենալ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի ձևաթուղթ:
38. Բաժինների պետերը՝
- 1) կազմակերպում են բաժնի աշխատանքները, իրենց իրավասության շրջանակներում տալիս են հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում դրանց ժամանակին և պատշաճ որակով կատարումը,
 - 2) աշխատակազմի քարտուղարին և համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին ներկայացնում են բաժնի աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում՝ բաժնի լիազորությունների սահմաններում նախապատրաստում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, միջնորդագրեր և այլ գրություններ,
 - 3) անհրաժեշտության դեպքում՝ համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի քարտուղարի համաձայնությամբ և հանձնարարությամբ, մասնակցում են համայնքապետարանի և (կամ) այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, այդ մարմիններից, պաշտոնատար

անձանցից ստանալով բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,

- 4) ստորագրում են իրենց և բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը,
- 5) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում են իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը,
- 6) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում են առաջարկություններ՝ բաժնի համայնքային ծառայողներին Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորելու, վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ ներկայացնում են բաժնի համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը,
- 7) կազմակերպում են քաղաքացիների դիմումների, առաջարկությունների, բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալին և աշխատակազմի քարտուղարին,
- 8) համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում են խորհրդակցություններ, հանդիպումներ, ապահովում այդ խորհրդակցությունների, հանդիպումների արձանագրությունների կազմումը,
- 9) համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի համապատասխան տեղակալի և (կամ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ,
- 10) պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության պահանջները, տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար:

VI. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39. Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:
40. Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել ստուգման, աուդիտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

41. Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 110-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆԺԱՄԿԵՏ,
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող «HOWO » ZZ332783847E մակնիշի 19-21տ. բեռնատարողությամբ ինքնաթափ մեքենան:

2. Վերը նշված գույքի պահպանման և շահագործման ծախսերն իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:

3. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել կամ հանձնել անհատույց օգտագործման:

4. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը Փամբակ համայնքի անունից հանձնել վարձակալության, որի ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի:

5. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՄՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 111-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ MT3 80 ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ԴԱՅ 24 ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԽՈՏԱՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Մար Մոս» ՍՊԸ-ի կողմից կատարված գնահատությունը և հաշվի առնելով Արջուտ գյուղի վարչական ղեկավար Վարդան Մկրտչյանի զեկուցագիրը այն մասին, որ համայնքային սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱՅ 24 ավտոմեքենան այլևս շահագործման պիտանի չեն, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող MT3 80 տրակտորը և ԴԱՅ 24 ավտոմեքենան խոտանելուն:
2. Համայնքի ղեկավարին՝ վերոնշյալ գույքերը օրենսդրությամբ սահմանված կարգով հետազայում հանել համայնքի հաշվեկշռից:
3. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՄՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՁԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 112-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,
ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողատեսքեր 13 լոտով.

- Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0360-0001 ծածկագրով 0,278084 հա գյուղատնտեսական 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 144 000 /մեկ հարյուր քառասունչորս հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0244-0037 ծածկագրով 0,90662 հա գյուղատնտեսական 3-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 782000 /յոթ հարյուր ութանասուներկու հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0122-0003 ծածկագրով 0,64306 հա գյուղատնտեսական խոտհարք 5-րդ կարգ: Մեկնարկային գինը սահմանել 65000 /վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-015-0121-0005 ծածկագրով 0,123007 հա գյուղատնտեսական 4-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 180000 /մեկ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ:
- Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0355-0011 ծածկագրով 0,060906 հա գյուղատնտեսական 4-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 32000 / երեսուներկու հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-066-0003-0001 ծածկագրով 0,082678հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 280 000 /երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 7: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0120-0008 ծածկագրով 0.49398 գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 90 000 /ինսուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 8: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0044-0015 ծածկագրով 0,0092 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 15 000 /տասն հինգ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 9: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0042-0002 ծածկագրով 0,2089 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 10: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0042-0007 ծածկագրով 0,210688 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 11: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-019-0108-0008 ծածկագրով 0.06328 հա գյուղատնտեսական 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 15 000 /տասը հինգ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 12: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0205-0052 ծածկագրով 0,151635 հա գյուղատնտեսական 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 27 000 /քսան յոթ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 13: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0215-0009 ծածկագրով 0,1 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 340 000 /երեք հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:


Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 113-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
«ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 14.10.2022թ-ի թիվ 123-Ա որոշման 2-րդ հավելվածը:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝




ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ „ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ,,
 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Դրույքային միավորների թվաքանակը՝ 43:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐ ԶԻ ՖՈՆԴ
1	Տնօրեն	1	320 000	320000
2	Տնօրենի տեղակալ	1	255 000	255000
3	Հաշվապահ	1	200 000	200000
4	Գործավար	1	180 000	180000
5	Օպերատոր	1	160 000	160000
6	Տրակտորիստ էքսկավատորի	2	160 000	320000
7	Տրակտորիստ-մեխանիզատոր	3	150 000	450000
8	Վարորդ աղբատար մեքենայի	4	140 000	560000
9	Վարորդ	5	130 000	650000
10	Զոդող	1	120 000	120000
11	Էլեկտրիկ	1	110 000	110000
12	Բանվոր աղբատար մեքենայի	4	120 000	480000
13	Բանվոր	8	105 000	840000
14	Արջուտի ջրագծի սպասարկող	1	150 000	150000
15	Եղեգնուտի ջրագծի սպասարկող	1	150 000	150000
16	Պահակ	4	105 000	420000
17	Հավաքարար	4	105 000	420000
	Ընդամենը	43.0		5785000

Համայնքի ղեկավար



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 114-Ն

**ՀՀ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 154-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 154-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի եկամուտների մասում կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 1-ի:
- 2) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ գործառնական դասակարգման, կատարել փոփոխություն՝ համաձայն հատված 2-ի:
- 3) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերում՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 3-ի:
- 4) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդում կամ դեֆիցիտում /պակասուրդում/ կատարել փոփոխություն համաձայն հատված 4-ի:
- 5) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղություններում կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներում կատարել փոփոխություն համաձայն հատված 5-ի:
- 6) Որոշմամբ հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, կատարել փոփոխություն համաձայն հատված 6-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՒԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

[Faint, mirrored text from the reverse side of the page is visible through the paper, including phrases like 'Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում' and '2023 թվականի դեկտեմբերի 27-ի'.]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 115-Ա
ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.10.2023թ. թիվ 90 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 01/111.6/07485-2023 - գրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**


1. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 06-102-0024-0048 ծածկագրերով 0,067062 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասը՝ «Վահագնի» ՓՀԷԿ-ի կայանային հանգույցի շինությունների նպատակային նշանակությանը համապատասխան պետական գրանցման նպատակով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների հողերի նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -10
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ՎԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՀԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 116-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի
ավագանին **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու
հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի
նոյեմբերի 14-ին, ժամը 13:00-ին:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու
նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄԿԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ